

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Պետրոս Քերթող Սիւնեցի (Վեցերորդ Դար)

Վեցերորդ դարուն ապրող նշանավոր դէմքերէն եղած է Պետրոս Քերթող, որ աւանդութեան համաձայն աշակերտած է Մովսէս անուն Քերթողին: Ծննդեան ժամանակը յայտնի չէ, բայց Սիւնիքի եպիսկոպոս կը կարգուի շուրջ 549ին եւ տաս տարիներ առաջնորդութիւնը կը վարէ այս թեմին: Մասնակցած է Ներսէս Բ.



Սիսաւանի Սբ. Գրիգոր կաթողիկէն-յեփագային վերանորոն-ւած Սբ. Յովհաննէս Մկրտիչ-կառուցման ժամանակը կը համարուի 680-90ական տարիներուն՝ ըստ Ստեփան Մնացականեանի:

կաթողիկոսին գումարած զանազան ժողովներուն, որոնց գործք-նամակներուն մէջ իր անունը յիշուած է:

Պետրոս Քերթողի անունով մեզի հասած են զանազան գրութիւններ, ճառական եւ պատմական բնոյթի. անոնցմէ կարելորագոյնը եւ հարազատն է **Գովեստ ի սուրբ Աստուածածինն եւ միշտ Կոյսն Մարիամ:**

Այս ճառին մէջ, հելլենաբան լեզուով՝ Պետրոս հետեւելով հանդերձ Սբ. Աթանասի համանիւթ գրութեան, զգացումով լի ներբողեան մը կը հիւսէ Սբ. Կոյսին, պատկերալից եւ խանդոտ բացատրութիւն-ներով:

Այս ճառը հաւանաբար ծառայած է-Սբ. Աթանասի գրութեան հետ-իբրեւ ներշնչարան **Մեծացուցէ** շարականներէն շատերուն:

Ստեփանոս Օրբելեան Պետրոսի կ'ընծայէ ուրիշ գրութիւններ ինչպէս նաեւ պատմական գրուածք մը Բաբիկ Սիւնիի վրայ, որ մեզի չեն հասած:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի «Պատմութիւն Հայ Գրականութեան» հատորէն)

Մարենագրութիւն

Ստեփանոս Օրբելեան 1910, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, Ն. Աղանեանցի տպ., 619 էջ:


Դիվան հայ վիմագրութեան 1960, Պրակ 2, Գորիսի, Սիսիանի և Ղափանի շրջաններ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 143 էջ:

Ս. Մնացականեան 1961, Սիսականի պատկերաբանդակները և տաճարի կառուցման ժամանակը, «Տեղեկագիր», N10, էջ 63-76: Մնացականեան Ս. 1964, Ակնարկ հայ ճարտարապետութեան պատմութեան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 322 էջ:

Հակոբեան Զ. 2016, Հայկական վաղմիջնադարյան քանդակը (4-7-րդ դարեր), Երևան, ԵՊՀ հրատ., 169 էջ:

Վ. Հարությունյան 1992, Հայկական ճարտարապետութեան պատմություն, Երևան, «Լոյս», 540 էջ: Թ. Սյունի 2007, Սյունի վանքը, Մոսկվա, 66 էջ:

(<https://armeniahiddengems.aaa.am/hy/monument/sisavank-saint-john-church-of-sisian/#more> accessed on Tuesday, December 9th, 2025)



Սիսաւանի Սբ. Գրիգոր կաթողիկէն վերանորոգումէն առաջ: